## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Գայ համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ,
Հեռ. (0231)60136 , gay.armavir@mta.gov.am

N 291
*06 դեկտեմբեր 2018թ.*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Մաթևոսյան

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի կողմից 2018 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում արձակած կարգադրություններն ու ընդունած որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս.Մարկոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 guy.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

05 նոյեմբերի 2018թվականի N 59

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի առաջին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Արմավիրի մարզի Գայ համայնքում 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների անցկացման համար սահմանել տեղամասային կենտրոններ՝

1) 14/32 ընտրական տեղամաս- Արմավիրի մարզի Գայ համայնքի դպրոցի շենքը՝Խաչատրյան փողոց, թիվ 2:

2) 14/33 ընտրական տեղամաս-Արմավիրի մարզի Գայ համայնքի դպրոցի շենքը՝Խաչատրյան փողոց, թիվ 2/1:

2. Նշանակել տեղամասային պատասխանատուներ՝

1) 14/32 ընտրական տեղամասում՝Գայ համայնքի դպրոցի տնօրեն Հայկազ Հարությունյանին:

2) 14/33 ընտրական տեղամասում՝Գայ համայնքի ղեկավարի տեղակալ Խուրշուդ Քոչարյանին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՄԱՐԳՈՒՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
05 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 60

## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի երրորդ մասով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով.

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք արտահերթ ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) քարոզչական պաստառները փակցնելու համար Արմավիրի մարզի Գայ համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Սարյան փողոց, թիվ 3- 4 քմ

20) Խաղաղության փողոց, թիվ 2 - 4 քմ

3) Խաչատրյան փողոց, թիվ 6- 4քմ

4) Իսահակյան փողոց, թիվ 1- 4քմ

2. Սույն որոշման օրինակն ուղարկել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 guy.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 նոյեմբերի 2018թվականի N 61

## ԱՆՎՃԱՐ ԴԱՀԼԻՃՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի երկրորդ մասով ,

Որոշում եմ.

1. 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով՝ սահմանված կարգով և ժամկետներում Արմավիրի մարզի Գայ համայնքի տարածքում տրամադրել անվճար դահլիճ՝

1) Գայ համայնքի դպրոցի դահլիճը՝ 200 տեղով:

2) Դահլիճից կարող են օգտվել բոլոր օրերին ժամը 18 –ից հետո , իսկ շաբաթ և կիրակի

օրերին ՝ժամը 16-ից հետո:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

05 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 62

## ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, <<Համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ռոբերտ Հովհաննիսյանի 2018 թվականի օգոստոսի 24-ի դիմումը.

Որոշում եմ

1. Վերականգնել Արմավիրի մազի Գայ համայնքի Գորկու 2 փողոց, տուն 12 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Ռոբերտ Հայդինովի Հովակիմյանի՝ ծնվ. 15.01.1984 թ. գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0,26 հա հողամասի ,կից ավել օգտագործվող 0, 0036 հա հողամասի և օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ՝բնակելի տուն՝57,6քմ կառուցված 1963թ., ծածկ՝79,1 քմ կառուցված 1963թ., ատիճանավանդակ ՝ 7 քմ կառուցված 1963թ, բնակելի տուն՝104,7 քմ. կառուցված 1985 թ.. բնակելի տուն ՝14 քմ կառուցված 1985 թ., բաց պատշգամբ՝21,1 քմ կառուցված 1985թ., սանհանգույց՝8,5 քմ կառուցված 1985 թ., ավտոտնակ՝24,1 քմ կառուցված 1985 թվականին:

Բնակելի տունը բավարարում է <<Համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները:

Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որոկավորում ստացած անձի կողմից:

3. Առաջարկել ՀՀ ԿԱԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորոբաժանմանը՝գրանցելու Ռոբերտ Հայդինովի Հովակիմյանի ծնվ. 15.01.1948 թ. սեփականության իրավունքը՝ սույն որոշման առաջին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, օժանդակ շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.Բնակելի տանը տրամադրել Մ. Գորկու 2 փողոց տուն 12 հասցեն:

5. Ուժը կորցրած ճանաչել Գայ համայնքի ղեկավարի 2018 թվականի օգոստոսի 28-ի թիվ 45 որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**

**ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 63

## ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով,<<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, <<Համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և հիմք ընդունելով Ժենիկ Խաչատրյանի 2018 թվականի նոյեմբերի 5-ի դիմումը.

Որոշում եմ.

1.Վերականգնել Արմավիրի մարզի Գայ համայնքի Երևանյան փողոց տուն 14 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Ժենիկ Աշոտի Խաչատրյանի /ծնվ. 03,12,1950թ./ և Արտյոմ Պարգևի Խաչատրյանի /ծնվ. 10,01,1975թ./ գույքային իրավունքները ՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը օրինական 0,12 հա հողամասի և օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ՝բնակելի տուն՝51,0քմ կառուցված 1960 թ., բաց պատշգամբ՝24,4 քմ կառուցված 1960 թ., ավտոտնակ՝29,4քմ կառուցված 1975թ., ծածկոց՝48,7քմ կառուցված 1975թ., :

Բնակելի տունը բավարարում է <<Համայնքների վարչական տարածքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները:

Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում , կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի , չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենք- շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3. Առաջարկել Հ Հ ԿԱԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը ՝ գրանցելու Ժենիկ  Աշոտի Խաչատրյանի ՝ծնվ. 03,12,2018թ. և Արտյոմ Պարգևի Խաչատրյանի՝ ծնվ. 10,01,1975թ.  սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան , օժանդակ շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. Բնակելի տանը տրամադրել Երևանյան փողոց , տուն 14 հասցեն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 նոյեմբերի 2018թվականի N 64

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի N731-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> N912-Ն որոշումների պահանջներով՝ և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Գայ համայնքի բնակիչ Կարեն Նշանի Կարապետյանի դիմումը.

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի վարչական սահմաններում գտնվող՝համայնքի Իսահակյան փողոց թիվ 4 հասցեի սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.26680հա հողամասում Կարեն Նշանի Կարապետյանի՝ծնվ.1965 թ. անձ. AM0716657 տրվ. 057-ի կողմից, 15,03 քմ և 1.07 քմ արտաքին չափով ինքնակամ կառուցված ծածկը և 2.28 քմ օժանդակ շինությունը ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիական կյանքին ու առողջությանը:

3. Ինքնակամ կառույցի պահպանումը չի հակասում քաղաքաշինական նորմերին և համայնքի գլխավոր հատակագծի պահանջներին, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

4. Պարտավորեցնել ինքնակամ կառույցն իրականացրած Կարեն Նշանի Կարապետյանին՝ծնվ.1965թ անձ. AM0716657 տրվ. 057-ի կողմից, գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով գնել 15,03քմ և 1.07 քմ արտաքին չափերով ինքնակամ կառուցված ծածկը 32840 / երեսուներկու հազար ութ

հարյուր քառասուն / դրամով և 2.28քմ օժանդակ շինությունը 4650/ չորս հազար վեց հարյուր հիսուն / դրամով:

5.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

6. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցելու Կարեն Նշանի Կարապետյանի (ծնված 20.08.1965թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան , բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

7. Բնակելի տանը տրամադրել Իսահակյան փողոց, տուն 4 հասցեն:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

հարյուր քառասուն / դրամով և 2.28քմ օժանդակ շինությունը 4650/ չորս հազար վեց հարյուր հիսուն / դրամով:

5.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

6. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցելու Կարեն Նշանի Կարապետյանի (ծնված 20.08.1965թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան , բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

7. Բնակելի տանը տրամադրել Իսահակյան փողոց, տուն 4 հասցեն:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 65-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1893-Ն որոշումը.

Որոշում եմ

1. Արմավիրի մարզի Գայ համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասերը և նրանց ամրակցված շինությունները վաճառել աճուրդային կարգով

1) Լոտ 1-ԿԾ 04-033-0032-0056, 0.0038 հա հողատարածքը և ԿԾ 04-033-0032-0056-001՝22.1քմ արտաքին չափերով արտադրական նշանակության կիսաքանդ շինությունը աճուրդային կարգով օտարել:0.0038հա հողամասի օտարման համար մեկնարկային գին սահմանել 728000/ յոթ հարյուր քսանութ հազար/ ՀՀ դրամ, իսկ կիսաքանդ շինության համար `75000/ յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ:Կանխավճարը և քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 %-ի չափով:Մասնակցության վճար՝5000/հինգ հազար/ ՀՀ դրամ:

2) Լոտ 2-ԿԾ 04-033-0032-0055՝0.00855հա հողամասը և ԿԾ 04-033-0032-0055-002՝2.8քմ պահեստը և ԿԾ 04-033-0032-0055-001՝80.6 քմ ծածկը աճուրդային կարգով օտարել:Հողամասի օտարման համար մեկնարկային գին սահմանել 164000/ մեկ հարյուր վաթսունչորս հազար/ ՀՀ դրամ, պահեստի և ծածկի համար՝286000/ երկու հարյուր ութսունվեց հազար/ ՀՀ դրամ:Կանխավճարը և քայլի չափը՝մեկնարկային գնի 5 %-ի չափով:Մասնակցության վճար՝5000/հինգ հազար/ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 66

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ կետով, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով.

Որոշում եմ՝

1.Արմավիրի մարզի Գայ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության , ինչպես նաև արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողատարածքները տրամադրել վարձակալության՝

1) Լոտ1-ԿԾ 04-033-0216-0003՝ 8,17 հա գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի վարելահողի համար տարեկան վարձավճարի չափ սահմանել 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Մեկնարկային քայլը՝ տարեկան վարձավճարի 5%-ի չափով:

2) Լոտ 2- ԿԾ 04-033-0032-0057՝ 0.2278 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողատարածքի համար՝ /կառուցապատման իրավունքով/ տարեկան վարձավճարի չափ սահմանել 43700 (քառասուներեք հազար յոթ հարյուր)ՀՀ դրամ:

Մեկնարկային քայլը ՝ տարեկան վարձավճարի 5%-ի չափով:

2. Տալ համապատասխան հայտարարություն<<Հայաստանի Հանրապետություն>> թերթում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 67

## ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և հաշվի առնելով, որ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում , բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներին և հիմք ընդունելով քաղաքացի Յուրի Ստեփանյանի 2018 թվականի նոյեմբերի 16-ի դիմումը.

Որոշում եմ

1.Վերականգնել Արմավիրի մարզի Գայ համայնքի Գորկու 2 փողոց թիվ 54 հասցեում գտնվող , քաղաքացի Յուրի Միքայելի Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող 0,175 հա օրինական տնամերձ հողամասի և կից ավել զբաղեցրած 0,0089 հա հողամասի նկատմամբ գույքային իրավունքները:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանումում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 68

### ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ և հիմք ընդունելով <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի >> 2018 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 138 եզրակացությունը և Գոհար Հովհաննիսյանի դիմումը.

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված. քաղաքացի Գոհար Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.01911 հա վարելահողը /ԿԾ 04-033-0222-0016/փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիայի՝ բնակելի կառուցապատման հողերի գործառնական նշանակության :

2. Սահմանված կարգով հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում՝ամենամյա հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համապատասխան մուծումներ կատարելուց հետո:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
12 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 29

## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>>պարբերությունների և 20-րդ կետի պահանջներով.

Կարգադրում եմ.

1.Արմավիրի մարզի Գայ համայնքի կարիքների համար՝Գայ համայնքի լուսավորության ցանցի վերակառուցման , գերեզմանատան զուգարանի կառուցման և կամրջի լայնացման աշխատանքների ձեռքբերման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանում համարել Գայ համայնքի ղեկավարի տեղակալ Խուրշուդ Քոչարյանին, իսկ գնումների համակարգող՝ Գայանե Հակոբյանին:

2.Պատասխանատու ստորաբաժանմանը և գնումները համակարգողին՝ գնման գործընթացը կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 30

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերությունների  և 20-րդ կետի պահանջներով.

Կարգադրում եմ

1.Արմավիրի մարզի Գայ համայնքի կարիքների համար՝ համայնքապետարանի ջեռուցման կաթսայի վերանորոգման  ծառայությունների ձեռքբերման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանում համարել Գայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Աննա Թադևոսյանին ,իսկ գնումների համակարգող՝Գայանե Հակոբյանին:

2.Պատասխանատու ստորաբաժանմանը և գնումները համակարգողին՝գնման գործընթացը կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 31

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ կետով.

Կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի և Գայ համայնքի <<Մշակույթ>> միացյալ տնօրինության գույքը գույքագրելու նպատակով՝ ստեղծել գույքագրման հանձնաժողով.

Հանձնաժողովի կազմը

Հանձնաժողովի նախագահ- Խուրշուդ Քոչարյան/Գայ համայնքի ղեկավարի տեղակալ/

Հանձնաժողովի անդամ- Ժենիկ Բոյաջյան/Գայի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ/

Հանձնաժողովի անդամ-Աննա Թադևոսյան/Գայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար/

Հանձնաժողովի անդամ-Ջավահիր Եփրեմյան-/Գայ համայնքի գրադարանի վարիչ/

2.Սույն հանձնաժողովին՝ նախատեսված աշխատանքներն իրականացնել մեկօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 32

## ՄԱՆՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով

Կարգադրում եմ

1.Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Արմավիրի մարզի Գայ համայնքի <<Մշակույթ>> միացյալ տնօրինության տնօրեն Մանյա Կարապետյանին պարգևատրել դրամական պարգևատրմամբ՝77000 (յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 33

ԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի ,,բ,, կետով.

Կարգադրում եմ

Աշխատանքային պարտականությունները գերազանց կատարելու համար՝Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Աննա Թադևոսյանին պարգևատրել դրամական պարգևատրմամբ՝173 000 (մեկ հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

### Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 34

### ԽՈՒՐՇՈՒԴ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով.

Կարգադրում եմ

Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի տեղակալ Խուրշուդ Քոչարյանին պարգևատրել դրամական պարգևատրմամբ՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ